



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՇՄՆ «ՀԻՂՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի
արդյունքների վերաբերյալ

2025թ.

2-րդ եռամսյակ

Կլիմա

Օդերևութաբանություն

Մթնոլորտային օդ

Մակերևութային ջրեր

Ստորերկրյա ջրեր

Հողեր

Կենսաբազմազանություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
Աղյուսակների ցանկ.....	3
Գծապատկերների ցանկ	3
Նկարների ցանկ	6
Հապավումներ	6
ՆԱԽԱԲԱՆ	7
1. ԿԼԻՄԱ	10
Կլիմայական ինդեքսներ.....	11
Երաշտ.....	13
Արեգակնային ճառագայթում	14
Քամու բաշխումը.....	14
Օդի հարաբերական խոնավություն	15
Մթնոլորտային ճնշումը.....	15
Երևան.....	15
2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	18
Ապրիլ.....	18
Մայիս	20
Հունիս.....	22
3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	25
Երևան.....	26
Գյումրի.....	29
Վանաձոր.....	31
Ալավերդի	34
Հրազդան.....	37
Արարատ.....	38
Կապան	39
Քաջարան	40
Չարենցավան.....	41
Ծաղկաձոր.....	42
Եվրոպայի մեծ տարածությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»	44
4. ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	45
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	46
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	49
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	54
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	60
Սևանա լիճ	63
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	70
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	75
Ջրամբարներ.....	77
Արաքս գետ	78
5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒԹՅՈՒՆ	79
6. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ	82
Հավելված 2. Դիտակետերի տեղադրության ցանկ	84
Հավելված 3. Ցուցանիշների ցանկ.....	100
Հավելված 4. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ	102

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Երաշտային պայմանները գարնանը	13
Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. ապրիլ	20
Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. մայիս	22
Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. հունիս	24
Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ֆիզիկաքիմիական ցուցանիշների կոնցենտրացիաները	43
Աղյուսակ 6. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները	44
Աղյուսակ 7. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը	46
Աղյուսակ 8. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը	49
Աղյուսակ 9. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը	54
Աղյուսակ 10. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը	60
Աղյուսակ 11. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2025թ. 2-րդ եռամսյակում	64
Աղյուսակ 13. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը	70
Աղյուսակ 14. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը	75
Աղյուսակ 15. Ջրամբարների ջրալցվածությունը 2025թ. 2-րդ եռամսյակում	77

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից գարնան սեզոնին՝ 1935-2025թթ.	10
Գծապատկեր 2. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից գարնան սեզոնին՝ 1935- 2025թթ.	11
Գծապատկեր 3. Օրական առավելագույն ջերմաստիճանների արժեքները 2025թ. գարնանը	11
Գծապատկեր 4. Օրական առավելագույն ջերմաստիճանի նվազագույն արժեքները 2025թ. Գարնանը	12
Գծապատկեր 5. Օրական նվազագույն ջերմաստիճանների արժեքները 2025թ. գարնանը	12
Գծապատկեր 6. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույնի արժեքները 2025թ. Գարնանը	12
Գծապատկեր 7. Քամու արագությունը 2025թ. գարնանը	14
Գծապատկեր 8. Օդի հարաբերական խոնավությունը 2025թ. գարնանը	15
Գծապատկեր 9. Մթնոլորտային ճնշումն 2025թ. գարնանը	15
Գծապատկեր 10. Օրական առավելագույն, նվազագույն և միջին ջերմաստիճանները երևանում 2025թ. Գարնանը	16
Գծապատկեր 11. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից երևանում	17
Գծապատկեր 12. Տեղումներ, ապրիլ 2025թ. (նորմա՝ 1991-2020թթ.)	19
Գծապատկեր 13. Տեղումներ, մայիս 2025թ. (նորմա՝ 1991-2020թթ.)	21
Գծապատկեր 14. Տեղումներ, հունիս 2025թ.	23
Գծապատկեր 15. Մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների	26
Գծապատկեր 16. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները	26
Գծապատկեր 17. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները	26
Գծապատկեր 18. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները	27
Գծապատկեր 19. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի կոնցենտրացիաները	27
Գծապատկեր 20. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները	29
Գծապատկեր 21. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները	31

Գծապատկեր 22. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	31
Գծապատկեր 23. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	32
Գծապատկեր 24. Սլավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիանները.....	34
Գծապատկեր 25. Սլավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	34
Գծապատկեր 26. Սլավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	35
Գծապատկեր 27. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիանները	37
Գծապատկեր 28. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	37
Գծապատկեր 29 հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	38
Գծապատկեր 30. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիանները	38
Գծապատկեր 31. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	39
Գծապատկեր 32. կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	39
Գծապատկեր 33. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	40
Գծապատկեր 34. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	40
Գծապատկեր 35. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	41
Գծապատկեր 36. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	41
Գծապատկեր 37. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիանները	42
Գծապատկեր 38. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	42
Գծապատկեր 39. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները.....	43
Գծապատկեր 40. Ամբերդի տարածաշրջանային կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիան	44
Գծապատկեր 41. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիանները.....	47
Գծապատկեր 42. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիանները.....	47
Գծապատկեր 43. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիանները	48
Գծապատկեր 44. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները.....	48
Գծապատկեր 45. մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիանների փոփոխությունները	50
Գծապատկեր 46. Ախուրյանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները.....	51
Գծապատկեր 47. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	51
Գծապատկեր 48. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	51
Գծապատկեր 49. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	52
Գծապատկեր 50. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները.....	52
Գծապատկեր 51. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը	53
Գծապատկեր 52. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիանների փոփոխությունները.....	55

Գծապատկեր 53. Հրազդան գետում ամռնիում իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները ..	55
Գծապատկեր 54. Հրազդան գետում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները	56
Գծապատկեր 55. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	57
Գծապատկեր 56. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	57
Գծապատկեր 57. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	57
Գծապատկեր 58. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	58
Գծապատկեր 59. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները.....	58
Գծապատկեր 60. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամռնիում իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	61
Գծապատկեր 61. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	61
Գծապատկեր 62. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	61
Գծապատկեր 63. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	62
Գծապատկեր 64. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	63
Գծապատկեր 65. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	63
Գծապատկեր 66. Մեծ Սևանում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	68
Գծապատկեր 67. Փոքր Սևանում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	68
Գծապատկեր 68. Մեծ Սևանում ամռնիում իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	69
Գծապատկեր 69. Փոքր Սևանում ամռնիում իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները	69
Գծապատկեր 70. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	71
Գծապատկեր 71. Արարարտյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները.....	72
Գծապատկեր 72. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	72
Գծապատկեր 73. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	73
Գծապատկեր 74. Արարարտյան ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	73
Գծապատկեր 78. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	76
Գծապատկեր 79. Երևանյան լճում նիտրիտ իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները	77
Գծապատկեր 80. Երևանյան լճում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	78
Գծապատկեր 81. Ընդերքօգտագործման թափոնների ուսումնասիրված տարածքներում ՍԹԿ-ից 5 և ավելի անգամ գերազանցումները	81

Նկարների ցանկ

Նկար 1. Միջին ամսական ջերմաստիճանները և դրանց շեղումները նորմայից ապրիլին (նորմա՝ 1991-2020թթ.)	18
Նկար 2. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից ապրիլին (նորմա՝ 1991-2020թթ.) ..	19
Նկար 3. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից մայիսին (նորմա՝ 1991-2020թթ.)	20
Նկար 4. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից մայիսին (նորմա՝ 1991-2020թթ.).....	21
Նկար 5. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից հունիսին (նորմա՝ 1991-2020թթ.)	22
Նկար 6. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) Հունիսին ...	23
Նկար 7. «Սևան» ազգային պարկում իրականացրած մոնիթորինգի դիտավայրերի տեղադրքը ...	82
Նկար 8. Կենսաբազմազանության դարկված տեսակները «սևան» ազգային պարկում.....	82
Նկար 9. «Հրազդան» անտառտնտեսությունում իրականացրած մոնիթորինգի դիտավայրերի տեղադրքը	83
Նկար 10. Կենսաբազմազանության դիտարկված տեսակները «Հրազդան» անտառտնտեսությունում.....	83

Հապավումներ

ՍԹԿ	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ԶԿՏ	ջրավազանային կառավարման տարածք
ԸԱԱ	ընդհանուր անօրգանական ազոտ
ԸԼԱ	ընդհանուր լուծված աղեր
ԿՉՆ	կախության չոր նյութեր
ԹԿՊ ₅	թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկ
ԹՔՊ	թթվածնի քիմիական պահանջարկ
մ	մետր
մմ	միլիմետր
մ/վ	մետր վայրկյանում
մկգ/մ ³	միկրոգրամ մեկ խորանարդ մետրում
մգ/լ	միլիգրամ մեկ լիտրում
մկՍմ/սմ	միկրոսիմենս մեկ սանիմետրում
հՊա	հեկտապասկալ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայհիդրոմետ» ՊՈԱԿ) 2025 թվականի 2-րդ եռամսյակի տեղեկագրում ներկայացված են սեզոնային կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակի և քանակի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի և քանակի մոնիթորինգի, ինչպես նաև հողային ծածկույթի ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվություն:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի աշխատանքային ծրագրերը կազմվում են կանոնադրության համաձայն և ղեկավարվելով հետևյալ հիմնական իրավական ակտերով.

❖ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի ««Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024-2026 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» N826-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 26-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2025 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 1545-Ն որոշում:

❖ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատելու և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի N 121-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1584-Ն հրաման:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 50 օդերևութաբանական կայանում, որոնցից 45-ը տեղադրված են ակնադիտական օդերևութաբանական կայանների տարածքում: 50 կայանում իրականացվում են ավտոմատ դիտարկումներ: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 192 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբաթական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է

սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի «Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի տարածաշրջանային դիտակայան (Ամբերդի դիտակայան):

Մակերևութային ջրերի քանակական մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ (այդ թվում 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային և 4 Սևանա լճի) Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա: 91 դիտակետում իրականացվում են ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների ամենօրյա դիտարկումներ: 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվում են ջրի ելքի չափումներ (տարեկան 25-35 անգամ): Հիդրոլոգիական դիտակետերից 9-ում տեղադրված են ջրի մակարդակի ավտոմատ մակարդակաչափեր (ռադարային կամ ինքնագրային):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Որոտան-Կեչուտ ջրատարի և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 114 ստորերկրյա ջրաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 54 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021թ. հունիսի 15-ի N212-Լ հրամանի:

Հիդրոթերմաբանության, մթնոլորտային օդի որակի, մակերևութային և ստորերկրյաջրերի մոնիթորինգի դիտացանց




1. ԿԼԻՄԱ

2025թ. գարնան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 6. 8°C, նորմայից (1991-2020թթ.) բարձր էր 1.8°C-ով: Այն յոթերորդ տաք գարունն էր դիտարկումների ողջ պատմության ընթացքում:

Գարնան երեք ամիսներն էլ տաք էին, հատկապես տաք էր մարտ ամիսը, երբ միջին ամսական ջերմաստիճանը նորմայից բարձր էր 2. 9°C-ով:


Գարնան ամենացածր ջերմաստիճանը դիտվել է մարտի 5-ին Աշոցքում՝ -23. 0°C, իսկ ամենաբարձր ջերմաստիճանը՝ մայիսի 31-ին՝ Մեղրիում 36°C:

Գարնան տեղումների քանակը՝ 211.3մմ, բարձր էր նորմայից և կազմել է նորմայի 106. 6%: Տեղումնառատ էր ապրիլ ամիսը, երբ ամսական տեղումները կազմեցին նորմայի 132%-ը:




Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից

Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից



Գծապատկեր 1. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից գարնան սեզոնին՝ 1935-2025թթ.




Գծապատկեր 2. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից զարնան սեզոնին՝ 1935-2025թթ.

Կլիմայի փոփոխության գնահատականները ցույց են տալիս, որ Հայաստանում 1935-2025թթ. ժամանակահատվածում զարնան սեզոնի միջին ջերմաստիճանը բարձրացել է 2.1°C-ով, իսկ տեղումները նվազել են մոտ 25մմ-ով կամ 12.7%-ով:


Կլիմայական ինդեքսներ

2025թ. զարնան սեզոնին դիտված առավելագույն ջերմաստիճանը (TXx) բարձր է եղել նորմայից: Ամենամեծ դրական շեղումները դիտվել են Անանուն լեռնանցքում՝ 3.9°C, Մեղրիում՝ 3.6°C, բացասական շեղումներ չեն գրանցվել:




Գծապատկեր 3. Օրական առավելագույն ջերմաստիճանների արժեքները 2025թ. զարնանը

2025թ. զարնան սեզոնին դիտված առավելագույն ջերմաստիճանի նվազագույն արժեքները (TXn) եղել են նորմային մոտ, սակայն առանձին կայաններում գրանցվել են և՛ դրական, և՛ բացասական շեղումներ: Առավելագույն դրական շեղումները դիտվել են Սիսիանում՝ 1.6°C, Ֆանտանում՝ 1.5°C, ամենամեծ բացասական շեղումը գրանցվել է Օձունում՝ -1.8°C:




Գծապատկեր 4. Օրական առավելագույն ջերմաստիճանի նվազագույն արժեքները 2025թ. զարնանը

2025թ. զարնան սեզոնին դիտված նվազագույն ջերմաստիճանը (TNn) մոտ է եղել նորմային, ամենամեծ դրական շեղումները դիտվել են Աշոցքում՝ 2.0°C, Մերձավանում՝ 1.6°C, ամենամեծ բացասական շեղումը գրանցվել է Սիսիանում՝ -1.7°C:



Գծապատկեր 5. Օրական նվազագույն ջերմաստիճանների արժեքները 2025թ. զարնանը

2025թ. զարնան սեզոնին դիտված նվազագույն ջերմաստիճանների առավելագույն արժեքը (TNx)-ը զգալիորեն բարձր է եղել նորմայից: Ամենամեծ դրական շեղումները նորմայից դիտվել են Իջևանում՝ 4.5°C, Օձունում՝ 3.7°C: Բացասական շեղումներ չեն գրանցվել:



Գծապատկեր 6. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույնի արժեքները 2025թ. զարնանը

Երաշտ

2025թ. ապրիլ-մայիս ամիսներին օդերևութաբանական երաշտի ինտենսիվության մոնիթորինգ իրականացվել է 38 կայանների տվյալների հիման վրա, որոնք բնութագրական են ամբողջ տարածքի համար: Երաշտային պայմանների գնահատումը իրականացվել է 5 կարգերով՝ 1-շատ ուժեղ, 2-ուժեղ, 3-միջին, 4-թույլ և 5-երաշտի բացակայություն, համաձայն ՀՀ կառավարության 2023թ. հունիսի 8-ի 925-Ն որոշման մեթոդաբանության:

Աղյուսակ 1. Երաշտային պայմանները գարնանը


N	Մարզ	Գայան	01. 04- 10. 04	11. 04- 20. 04	21. 04- 30. 04	01. 05- 10. 05	11. 05- 20. 05	21. 05- 31. 05
1	Շիրակ	Գյումրի	5	5	5	5	5	5
		Ամասիա	5	5	5	5	5	5
		Արթիկ	5	5	5	5	5	5
		Աշոցք	5	5	5	5	5	5
2	Լոռի	Օձուն	5	5	5	5	5	5
		Վանաձոր	5	5	5	5	5	5
		Ստեփանավան	5	5	5	5	5	5
		Պուշկինի լ-ք	5	5	5	5	5	5
3	Տավուշ	Բազրատաշեն	5	5	5	5	5	5
		Իջևան	5	5	5	5	5	5
4	Գեղարքունիք	Սևան	5	5	5	5	5	5
		Սեյրնուկյա	5	5	5	5	5	5
		Գավառ	5	5	5	5	5	5
		Շորժա	5	5	5	5	5	5
		Մարտունի	5	5	5	5	5	5
		Ճամբարակ	5	5	5	5	5	5
		Մասրիկ	-	-	-	5	5	5
5	Կոտայք	Հրազդան	5	5	5	5	5	5
		Եղվարդ	5	5	5	5	5	5
		Ֆանտան	5	5	5	5	5	5
6	Արագածոտն	Թալին	5	5	5	5	5	5
		Ապարան	5	5	5	5	5	5
		Աշտարակ	5	5	5	5	5	4
		Ամբերդ	5	5	5	5	5	5
		Ծաղկահովիտ	5	5	5	5	5	5
		Արագած Բ-լ	5	5	5	5	5	5
7	Վայոց ձոր	Արենի	5	5	5	5	5	4
		Ջերմուկ	5	5	5	5	5	5
8	Սյունիք	Սիսիան	5	5	5	5	5	5
		Գորիս	5	5	5	5	5	5
		Կապան	2	5	5	5	5	5
		Մեղրի	1	5	5	5	3	3
9	Արարատ	Ուրցաձոր	5	5	5	5	5	3
		Անանուն լ/ք	5	5	5	5	5	5
		Արտաշատ	3	3	5	5	5	5
10	Արմավիր	Արմավիր	5	5	5	5	5	4
		Մերձավան	5	5	5	5	5	3
11	Երևան	Երևան-աերո	5	5	5	5	5	5

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, 2025թ. գարնանը Հայաստանի շրջանների մեծ մասում երաշտային պայմանները չեն ձևավորվել: Ապրիլի առաջին տասնօրյակում, միայն Սյունիքի հովտային շրջաններում՝ Մեղրի, Կապան, դիտվել են ոչ երկարատև երաշտային պայմաններ:

Արեգակնային ճառագայթում

2025թ. գարնան ամիսների արեգակնային ուղիղ ճառագայթման բաշխման քարտեզներից երևում է, որ մայիս ամսին գրանցված արժեքները ամենաբարձրն են գարնան սեզոնի ընթացքում (մինչև 200Վտ/մ²): Գարնան երեք ամիսներին էլ Արարատյան դաշտը առանձնացել է արեգակնային ճառագայթման առավելագույն ինտենսիվությամբ, իսկ դեպի հյուսիս-արևելք արեգակնային ճառագայթման արժեքները աստիճանաբար նվազում են՝ ապրիլ ամսին հասնելով նվազագույնի (40Վտ/մ²):


Արեգակնային ուղիղ ճառագայթում (Վտ/մ²)



Կարճալիք ճառագայթման արժեքները (Վտ/մ²) ըստ արբանյակային դիտարկումների մարտ, ապրիլ և մայիս ամիսներին (ձախից աջ հերթականությամբ)

Քամու բաշխումը


Գարնան սեզոնին քամու միջին արագությունը հովտային շրջաններում՝ 500-800 մ բարձրություններում, կազմել է 1.7մ/վ, 800-1000մ բարձրություններում՝ 1.4մ/վ: Քամու միջին արագությունը 2000-2500մ բարձրություններում հասել է մինչև 3.2մ/վ, իսկ 2500մ-ից բարձր բարձրալեռնային գոտում՝ 3.0մ/վ, որը նորմայից ցածր էր 1.7մ/վ-ով:



*Բարձրությունը ծովի մակարդակից, մ
Գծապատկեր 7. Քամու արագությունը 2025թ. գարնանը*


Օդի հարաբերական խոնավություն

2025թ. գարնան սեզոնին օդի հարաբերական խոնավությունը մինչև 1500մ բարձրությունները եղել է նորմայից ցածր, իսկ ավելի բարձր գոտիներում՝ հարաբերական խոնավությունը նորմայից բարձր էր:



Մթնոլորտային ճնշումը

2025թ. գարնան սեզոնին մթնոլորտային ճնշումը բոլոր բարձրություններում եղել է նորմայի սահմաններում:




Երևան




Երևանում մարտ ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 10°C, որը նորմայից բարձր է 3.3°C-ով: Տեղումների քանակը եղել է 21.5մմ, որը կազմում է մարտ ամսվա նորմայի 69%-ը:

Ապրիլ ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 13.1°C, որը նորմայից բարձր է 0.5°C-ով: Տեղումների քանակը եղել է 67.7մմ, որը կազմում է ապրիլ ամսվա նորմայի 138%-ը:

Մայիս ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 19.3°C, որը նորմայից բարձր է 1.8°C-ով: Տեղումների քանակը եղել է 25.8մմ, որը կազմում է մայիս ամսվա նորմայի 51%-ը:



Գծապատկեր 10. Օրական առավելագույն, նվազագույն և միջին ջերմաստիճանները Երևանում 2025թ. զարնանը




Գծապատկեր 11. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից Երևանում 2025թ. զարնանը

2. ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապրիլ


2025թ. ապրիլին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր 1 աստիճանով:



Նկար 1. Միջին ամսական ջերմաստիճանները և դրանց շեղումները նորմայից ապրիլին (նորմա՝ 1991-2020թթ.)

Ապրիլ ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 2-4 աստիճանով, երկրորդ տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-3 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր 1-3 աստիճանով:


Ամսական տեղումների քանակը ապրիլին Տավուշում կազմել է նորմայի 104-175%, Լոռիում՝ 113-142%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 96-160%, հովտային շրջաններում՝ 86-112%, Գեղարքունիքում՝ 97-225%, Շիրակում՝ 123-179%, Վայոց ձորում՝ 86-88%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 125-156%, նախալեռնային շրջաններում՝ 114-115%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 94-230%, նախալեռնային շրջաններում՝ 130-140%, Արմավիրում՝ 169-170%, Արարատում՝ 114-169%, Երևան քաղաքում՝ 138-140%:



Նկար 2. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից ապրիլին (նորմա՝ 1991-2020թթ.)

Ապրիլի 2-ին, 4-7-ին, 11-13-ին, 20-21-ին, 26-ին, 28-29-ին առանձին շրջաններում, ապրիլի 3-ին, 8-10-ին, 14-16-ին, 22-25-ին, 27-ին և 30-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Ապրիլի 1-ին և 17-19-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:




Գծապատկեր 12. Տեղումներ, ապրիլ 2025թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. ապրիլ

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Լոռի / Օձուն	09	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Գեղարքունիք / Մարտունի	09	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	28մ/վ
Լոռի / Ստեփանավան	13	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ

Մայիս


2025թ. մայիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր 1-2 աստիճանով:



Նկար 3. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից մայիսին (նորմա՝ 1991-2020թթ.)

Մայիս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով, երկրորդ տասնօրյակում եղել է նորմային մոտ՝ դրական և բացասական շեղումներով:


Ամսական տեղումների քանակը մայիսին Տավուշում կազմել է նորմայի 86-101%, Լոռիում՝ 63-96%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 37-75%, հովտային շրջաններում՝ 53-60%, Գեղարքունիքում՝ 57-111%, Շիրակում՝ 59-124%, Վայոց ձորում՝ 69-88%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 73-80%, նախալեռնային շրջաններում՝ 84-85%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 78-118%, նախալեռնային շրջաններում՝ 62-130%, Արմավիրում՝ 98-99%, Արարատում՝ 103-261%, Երևան քաղաքում՝ 51-96%:



Նկար 4. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից մայիսին (նորմա՝ 1991-2020թթ.)

Մայիսի 1-ին, 4-ին, 7-ին, 9-10-ին, 16-ին, 19-21-ին, 25-28-ին, 30-31-ին առանձին շրջաններում, մայիսի 2-3-ին, 5-6-ին, 8-ին, 11-15-ին, 24-ին և 29-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Մայիսի 17-18-ին և 22-23-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:




Գծապատկեր 13. Տեղումներ, մայիս 2025թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. մայիս

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Արագածոտն / Ծաղկափուկիտ	03	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	25մ/վ
Արարատ / Արտաշատ	05	Ուժեղ անձրև	Ինտենսիվություն	≥ 50 մմ/ ≤ 48 ժամ	58.2մմ
Տավուշ / Բջևան	13	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	25մ/վ
Շիրակ / Արթիկ	14	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	25մ/վ
Շիրակ / Աշոցք	30	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	26մ/վ

Հունիս

2025թ. հունիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմային մոտ մի փոքր դրական և բացասական շեղումներով:




Նկար 5. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից հունիսին (նորմա՝ 1991-2020թթ.)

Հունիս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն էրեք տասնօրյակներում եղել է նորմային մոտ դրական և բացասական շեղումներով:

Ամսական տեղումների քանակը հունիսին Տավուշում կազմել է նորմայի 78-132%, Լոռիում՝ 81-110%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 37-80%, հովտային


շրջաններում՝ 20-82%, Գեղարքունիքում՝ 26-124%, Շիրակում՝ 48-91%, Վայոց ձորում՝ 16-50%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 15-74%, նախալեռնային շրջաններում՝ 8-9%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 48-67%, նախալեռնային շրջաններում՝ 16-68%, Արմավիրում՝ 32-33%, Արարատում՝ 3-6%, Երևան քաղաքում՝ 6-10%:



Նկար 6. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (ներառյալ 1991-2020թթ.) հունիսին

Հունիսի 2-ին, 4-ին, 5-13-ին, 15-18-ին, 21-24-ին առանձին շրջաններում, հունիսի 3-5-ին, 14-ին, 29-30-ին շրջանների զգալի մասում դիտվել են անձրև և ամպրոպ, առանձին հատվածներում նաև կարկուտ:

Հունիսի 1-ին, 19-20-ին և 25-28-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:



Գծապատկեր 14. Տեղումներ, հունիս 2025թ.

Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2025թ. հունիս

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Գեղարքունիք / Մասրիկ	13	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	26մ/վ
Շիրակ / Գյումրի	14	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	29մ/վ
Շիրակ / Գյումրի	14	Կարկուտ	Տրամագիծ	≥ 10 մմ	18մմ
Արագածոտն / Թալին	14	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	25մ/վ
Շիրակ / Արթիկ	14	Ուժեղ քամի	Արագություն	≥ 25 մ/վ	32մ/վ
Արագածոտն / Ապարան	15	Կարկուտ	Տրամագիծ	≥ 10 մմ	17մմ
Արագածոտն / Ապարան	15	Փոթորիկ	Արագություն	≥ 25 մ/վ	39մ/վ
Կոտայք / Հրազդան	21	Կարկուտ	Տրամագիծ	≥ 10 մմ	15մմ

3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:


Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, շինարարության և այլ ոլորտների գործունեության հետևանքով:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ժամանակ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2025թ. 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 192 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները ներկայացված են տարածական բաշխման քարտեզների տեսքով և հասանելի են www.meteomonitoring.am կայքում:

2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում քաղաքներում ըստ բաղադրության չտարբերակված փոշու օրական կոնցենտրացիաները որոշ օրերին գերազանցել են համապատասխան ՄԹԿ-ն: Վանաձոր, Արարատ և Հրազդան քաղաքներում մթնոլորտային օդում փոշու առավելագույն միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է մայիս և հունիս ամիսներին:




Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:


Մայրաքաղաքի տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվել են մթնոլորտային օդում փոշու և ազոտի երկօքսիդի պարունակությունների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: 2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-6.3 անգամ (59 օր), իսկ ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 1.1-1.7 անգամ (46 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (947 մկգ/մ^3) դիտվել է ապրիլի 10-ին՝ Կենտրոն համայնքում, ազոտի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (70 մկգ/մ^3)՝ հունիսի 4-ին՝ Նոր Նորք համայնքում: Ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի միջին օրական և ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Երևան



Գծապատկեր 16. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիանները

Երևան




Գծապատկեր 17. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները

*կախված մասնիկներ


**անհիդրիդ ծծմբային

Երևան




Գծապատկեր 18. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները

Երևան




Գծապատկեր 19. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի կոնցենտրացիանները

**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



Պարնառական նշաններ


- ★ Պատվիկ նմուշառման դիտակետեր
- ◆ Անդրիկ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածությունը ամսական (մգ/մ³)




**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




Պարնառական նշաններ

- ★ Պատվիկ նմուշառման դիտակետեր
- ◆ Անդրիկ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ




Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածությունը ամսական (մգ/մ³)



Գյումրի




Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1-3.1 անգամ (17 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (466 մկգ/մ^3) դիտվել է ապրիլի 21-ին:






Գծապատկեր 20. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիանները

**Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




**Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:


2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում քաղաքի փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1-5.1 անգամ (66 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (766 մկգ/մ^3) դիտվել է հունիսի 15-ին՝ Դիմաց թաղամասում: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին օրական և ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 21. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները




Գծապատկեր 22. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները




Գծապատկեր 23. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 20 շաբժական դիտակետ:


2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում քաղաքի փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1- 3.8 անգամ (48 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (577 մկգ/մ^3) դիտվել է հունիսի 27-ին՝ Սանահին սարահարթում: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին օրական և ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 24. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները




Գծապատկեր 25. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները




Գծապատկեր 26. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները

Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Հրագրան

Հրագրան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:


2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն 1.1-3.2 անգամ (26 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (476 մկգ/մ^3) դիտվել է մայիսի 18-ին: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին օրական և ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 27. Հրագրան քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները



Գծապատկեր 28. Հրագրան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները




Գծապատկեր 29 Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները

Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ:

2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն 1.1-2.9 անգամ (22օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (429մկգ/մ³) դիտվել է ապրիլի 9-ին:




Գծապատկեր 30. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները


Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիտվել է ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի որոշակի աճ:



Գծապատկեր 31. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները




Գծապատկեր 32. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները


Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիտվել է ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի որոշակի աճ:



Գծապատկեր 33. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները




Գծապատկեր 34. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները


Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիտվել է ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի որոշակի աճ:



Գծապատկեր 35. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիանները




Գծապատկեր 36. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները


Ծաղկածոր

Ծաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 37. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները



Գծապատկեր 38. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները



Փճապատկեր 39. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիանները

Մթնոլորտային տեղումների բաղադրությունը


2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է տեղումների՝ անձրևի 8 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 4-ում: 2-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ֆիզիկաքիմիական ցուցանիշների կոնցենտրացիաները:

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
09.04.2025	6.6	37.4	2.2	0.4	1.6	0.4
10.04.2025	7.4	145.8	8.3	1.5	2.2	0.8
15.04.2025	6.4	20.7	1.8	0.4	1.3	0.3
24.04.2025	6.8	57.1	5.7	0.7	3.8	0.6
25.04.2025	6.8	15.5	1.2	0.3	0.5	0.2
06.05.2025	6.7	42.2	1.0	0.6	3.0	0.7
14.05.2025	6.8	36.6	0.9	0.4	2.0	0.5
15.05.2025	6.9	14.3	0.3	0.2	1.2	0.3

Եվրոպայի մեծ տարածությունների վրա անդրասահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»
Մթնոլորտային օդ

Ամբերդի տարածաշրջանային կայանում 2025թ. 2-րդ եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, փոշու և փոշու մեջ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:



Գծապատկեր 40. Ամբերդի տարածաշրջանային կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիան
Մթնոլորտային տեղումների բաղադրությունը

2025թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է տեղումների՝ անձրևի 16 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների բաղադրությունը՝ բնութագրող 32 ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 5-ում: 2-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 6. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
03.04.2025	6.8	6.8	27.0	0.5	1.9	1.7
08.04.2025	6.9	6.9	32.5	0.5	4.0	0.3
13-14.04.2025	7.2	7.2	24.0	2.8	1.3	0.7
14-15.04.2025	6.8	6.8	11.8	0.6	0.6	0.2
15.04.2025	6.7	6.7	16.9	0.8	1.1	0.2
20.04.2025	6.9	6.9	27.9	0.4	0.9	0.2
22-23.04.2025	6.9	6.9	37.6	0.6	2.9	0.3
23-24.04.2025	6.7	6.7	18.7	0.3	1.0	0.5
25.04.2025	6.9	6.9	14.3	0.3	0.7	0.2
26-27.04.2025	6.7	6.7	25.2	0.4	2.0	0.3
29-30.04.2025	6.9	6.9	23.7	0.3	3.7	1.8
05.05.2025	6.6	33.6	2.9	0.7	1.6	0.3
06.05.2025	6.6	59.1	3.2	0.8	0.1	0.7
11-12.05.2025	7.1	31.0	2.5	0.7	2.5	0.3
13-14.05.2025	7.2	20.1	1.9	0.4	0.8	0.5
14.05.2025	7.4	11.3	1.0	0.3	0.7	0.4

4. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները կարող են լինել.

- կետային, որոնցից են կենցաղային և արդյունաբերական հոսքաջրերը
- ցրված՝ գյուղատնտեսական արտահոսքերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2025թ. 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 79 հիդրոլոգիական դիտակետում. այդ թվում՝ 68 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ (առկայության դեպքում), ջրի ելքի չափումներ): 59 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով ստացվում են տվյալներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ:

2025թ. 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 109 դիտակետում. այդ թվում՝ 98 գետային, 2 ջրատարային, 6 ջրամբարային և 3 լճային (Սևանա լիճ): Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է ինչպես լճի մակերևութից, այնպես էլ տարբեր խորություններից (Մեծ Սևանի դեպքում՝ 0.5, 5, 10, 20, 25, 30մ խորություններից, Փոքր Սևանի դեպքում՝ նաև 40, 55, 70, 80մ խորություններից):

